«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 22/02

ք.Երևան, Արշակունյաց 5.417 սենյակ 14.08.2018թ. ժամը 14:00

Համաձայն 08.08.2018թ. գրությամբ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 08.08.2018թ-ին ստացված, քաղաքացի Մանուկ Աֆրիկյանի դիմումի հիմքով, «Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Օգոստոս-14-ին ժամը 14.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու «Հիքսոս» ՍՊԸ-ի մասնակից Մանուկ Աֆրիկյանը
«Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու «Հիքսոս» ՍՊԸ-ի մասնակից Մանուկ Աֆրիկյանը

«Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանը ծանուցվել էր նիստի մասին,սակայն անհայտ պատճառով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը նիստին չէր ապահովվել:

Մինչև նիստը սկսելը դիմումատու «Հիքսոս» ՍՊԸ-ի մասնակից Մանուկ Աֆրիկյանը ցանկություն հայտնեց հանձնաժողովին ներկայացնել գրություն /բաղկացած 5 թերթից և նրան կից հիմնավորող փաստաթղթեր /բաղկացած 45 թերթից/,որը ընդունվեց հանձնաժողովի նախագահի կողմից:

Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը խնդրեց հանձնաժողովի անդամներին հայտնել կարծիք առանց Սնանկության գործով կառավարչի կարգապահական վարույթի նիստը սկսելու վերաբերյալ,հայտնելով հանձնաժողովին,որ կառավարչի կողմից ստացվել է դրմումը,բայց գրավոր պատասխան կամ բացատրություն և այլ փաստաթղթեր չի ներկայավել:

Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը հայտնեց այն կարծիքը,որ դիմում նշված հանգամանքները ավելի շատ կապված են սնանկության գործով կառավարչի կողմնակալության մեղադրանքների հետ,որը պարզել առանց կառավարչի և նրա ներկայացրած ապացույցների հնարավոր չի լինի,ուստի առաջարկեց հետաձգել նիստը և ապահովվել սնանկության գործով կառավարչի ներկայությունը:

Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը համաձայնեց առաջարկին և ավելացրեց,որ դիմումատուի ներկայացրած նոր գրությունը և կից ծավալուն փաստաթղթերը նույնպես այս պահին հանձնաժողովի կողմից հնարավոր չի ուսումնասիրել և քննարկել,բացի դրանից այդ փաստաթղերի վերաբերյալ պետք տեղեկացվի կառավարիչը որպեսզի հայտնի իր դիրքորոշումը:

Հանձնաժողովի մյուս անդամները նույնպես համաձայնեցին այն կարծիքին որ,հաշվի առնելու այն հանգամանքը, որ «Հիքսոս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանի

բացակայության պայմաններում մի շարք հարցեր մնալու են չպարզաբանված,որը հնարավորություն չի ստեղծի հանձնաժողովին վերջնական եզրակացության գալու ու այն փաստը որ դիմումատուն նիստի օրը ներկայացրեց այլ գրություն և ծավալուն ապացույցներ ,ուստի հետաձգել հանձնաժողովի նիստը մեկ այլ հերթի,ապահովվելով կառավարչի ներկայությունը:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը հետաձգելու վերաբերյալ առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 08.08.2018թ-ին ստացված, քաղաքացի Մանուկ Աֆրիկյանի դիմումի հիմքով «Հիքսոս»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Սահակյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգա- մանքների քննության համար 2018թ-ի Օգոստոսի 14-ին ժամը 14.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը հետաձգել և նշանակել 30.08.2018թ-ին ժամը 16.00-ին, ք.Երևան, Արշակունյաց 5.417 սենյակ, հասցեում:
2.Հանձնաժողովի քարտուղարին ապահովվել կողմերին պատշաճ ծանուցում, հանձնաժողովի նիստի վայրի և ժամի մասին

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան